



Metro

Los Angeles County
Metropolitan Transportation Authority


One Gateway Plaza
Los Angeles, CA 90012-2952

Հարգելի ընկերներ,

Los Angeles վարչաշրջանի ավելի բարգավաճ ապագան կախված է մեր ընդհանուր կարողությունից հնարավորություն ընձեռնել մարդկանց ավելի արդյունավետ տեղաշարժվել տարածաշրջանում: Ավելի լավ շարժականությունը հանգեցնում է հնարավորություններին ավելի մեծ հասանելիությանը բոլորի համար, ներառյալ՝ աշխատանքները, կրթությունը, բնակության վայրը և առողջապահությունը՝ բարեկեցության կարևորագույն բաղադրիչները: Մինչ Metro-ն սկսում է երկրում փոխադրումների ընդլայնման ամենամեծ ծրագիրը, մենք հնարավորություն ունենք բարելավելու մեր գոյություն ունեցող բոլոր ծառայությունների որակը և օգտագործելու մեր համակարգի բոլոր ռեժիմները վարչաշրջանի տարածքում ավելի հուսալի, հարմարավետ և անվտանգ ճամփորդության համար: Metro-ի տեսլական 2028 (Metro Vision 2028) նախագիծն առաջարկում է համակողմանի մոտեցումներ մեր շարժականության ապագայի վերափոխման վերաբերյալ՝ մեր փոխադրման համակարգի նախագծման և շահագործման ձևի կենտրոնում ունենալով մեր հաճախորդներին: Հաճախորդ ասելով՝ ես նկատի ունեմ յուրաքանչյուր անձ, ով ապրում, աշխատում և խաղում է LA վարչաշրջանում:

LA վարչաշրջանում մենք գտնվում ենք առանցքային ժամանակում: Կորցնելու ժամանակ չկա: Մենք պետք է օգտվենք այս հնարավորությունից ավելի կայուն ապագա ապահովելու համար՝ այժմ քայլեր ձեռնարկելով կարողությունների կառավարման և մեր փոխադրումների համակարգի արդյունավետության բարելավման ուղղությամբ: Metro-ի տեսլական 2028 (Metro Vision 2028)՝ դա ռազմավարություն է՝ միտված մեր ծառայությունների որակի բարձրացմանը, այն ավելի լավը դարձնելուն յուրաքանչյուրի համար:

Southern California-ի շրջանի փոխադրումների մարտահրավերները պահանջում են կտրուկ միջոցներ: Metro-ի տեսլական 2028 (Metro Vision 2028) բարձրաձայնում է մեր նպատակները կիրառելու աննախադեպ և նորարարական մոտեցումներ՝ այդ մարտահրավերներին արձագանքելու նպատակով: Լուծումները կպահանջեն համակողմանի և համագործակցային մոտեցում տարածաշրջանի բոլոր մարդկանց կողմից, ներառյալ Ձեզանից յուրաքանչյուրը: Խնդրում եմ համարել Տեսլական 2028-ը որպես հրավեր՝ LA վարչաշրջանի յուրաքանչյուր բնակչին՝ միանալու մեր այս ճամփորդությանը դեպի տեղաշարժման համար ավելի նպաստավոր ապագա:

Լավագույն ցանկություններով,


Phillip A. Washington

Գլխավոր գործադիր տնօրեն

Metro-ի տեսլական 2028-ը (Metro Vision 2028) ցանկության դեպքում հասանելի է լրացուցիչ լեզվական ձևաչափերով:

ԳՈՐԾԱԴԻՐ ԱՍՓՈՓՈՒՄ

Metro-ի տեսլական 2028 (Metro Vision 2028) ծրագիրը («Ծրագիր»)՝ ամբողջ գործակալությունը ներառող ռազմավարական ծրագիր է, որը հիմքեր է ստեղծում փոփոխելու շարժականությունը Los Angeles County-ում (LA County) հաջորդ 10 տարիների ընթացքում: Ավելի քան մեկ տարի տևած հանրային քննարկումների արդյունքում՝ այն Metro-ի համար ձևավորել է առաքելություն, տեսլական, կատարողական արդյունքներ և նպատակներ, ինչպես նաև գործի է դրել յուրահատուկ նախաձեռնություններ և կատարողական արդյունքներ, որոնց հասնելու համար պետք է ձգտեն Metro-ն և իր գործընկերները՝ փոխադրման ավելի լավ ապագա ունենալու մղումով:

Հանրային քննարկում

Տեսլական 2028-ը արդյունք է ավելի քան 18 ամիս տևած հետազոտության, քննարկման և հանրային քննարկումների: Metro-ն կարծիքներ է հավաքել մեծ թվով շահագրգիռ կողմերից և հիմնական ազդեցիկ դեմքերից, և մենք հարցում ենք կատարել հաճախորդների (նշանակում է՝ որևէ մեկը, ով ապրում կամ աշխատում է LA County-ում) և մեր աշխատակիցների շրջանում: Metro-ն դասեր քաղեց հեռանկարների մեծ շրջանակից, և, հանրային քննարկումների հիման վրա, մենք մատնանշեցինք հետևյալ առանցքային միտումները, որոնք ներկայացնում են LA County-ի բնակիչներին գործուն և արդյունավետ փոխադրման մատուցման մարտահրավերներն ու բարդությունները.

- Պահանջարկի շարունակական աճը լարման մեջ է պահում առանց այն էլ գերծանրաբեռնված փոխադրման համակարգը
- Բազմազան բկակչությամբ շրջանում փոխադրումների կարիքներն ու ակնկալիքները էլ ավելի են բարդանում
- Տեխնոլոգիական նորարարությունները փոխում են փոխադրումների լանդշաֆտը
- Շրջանի տարածքում մատչելի բնակարանների պակասությունը սրում է փոխադրումների հետ կապված մարտահրավերները
- Անհատական մեքենավարումը խրախուսող քաղաքականությունների բարեփոխումների ձախողումը կշարունակի ավելացնել խցանումները և կրճատել շարժողականությունը



Metro[®]

Առաքելություն և տեսլական

Metro-ի առաքելությունն է՝ կառուցել բարձր մակարդակի փոխադրման համակարգ, որը կբարելավի LA County-ում ապրող, աշխատող և զվարճացող յուրաքանչյուր անհատի կյանքի որակը: Metro-ի տեսլականը կազմված է երեք տարրերից.

- Շարժողականության խոչընդոտների վերացման միջոցով բարգավաճում բոլորի համար;
- Ցանկացած պահի արագ և հեշտ փոխադրումներ LA County-ի տարածքով, և
- Ավելի շատ ուղևորությունների կատարում՝ տարբեր բարձրակարգ շարժական տարբերակների միջոցով

Ծրագիրը գիտակցում է, որ LA County-ն ունի փոխադրումների բարդ էկո-համակարգ, որը վերահսկվում է տեղական, շրջանային, նահանգային և դաշնային գործակալությունների խմբակային աշխատանքի շնորհիվ: Մեր տարածաշրջանն ունի փոխադրումների մի շարք մարտահրավերներ, որոնք հաճախ թվում են, թե անհաղթահարելի են: Անգամ նման դեպքում մենք պետք է համագործակցենք մեր տարածաշրջանային գործընկերների հետ, որպեսզի հնարավորություն տանք այս ցանցին կազմակերպել մարդկանց և ապրանքների ավելի արդյունավետ փոխադրումներ: Տեսլական 2028-ն ուշադրության կենտրոնում է պահում ուղևորներին՝ տրանսպորտային միջոցներից առավելությունը տալով մարդկանց և ավելի արդյունավետորեն օգտագործելով արդեն իսկ գոյություն ունեցող ցանցերը:

Կատարողական արդյունքներ

Մեր ներկայիս փոխադրման համակարգը լրջորեն խցանված է ճանապարհային տարածությունների ոչ պատշաճ օգտագործման հետևանքով: Փողոցի սահմանափակ տարածքը հիմնականում տրամադրվում է մեկական հոգի փոխադրող տրանսպորտային միջոցներին, որոնք շատ հաճախ մնում են խցանումների մեջ, մինչդեռ մեր համայնքի ամենից պակաս հնարավորություններ ունեցող անդամներին հասանելի են փոխադրման միայն այնպիսի տարբերակներ, որոնք չեն համապատասխանում փոխադրումների իրենց տարրական կարիքներին: Մեզ անհրաժեշտ է ավելի արդյունավետորեն օգտագործել հանրային տարածքները՝ միևնույն ժամանակ բոլորին տրամադրելով տեղաշարժվելու ավելի բարձրորակ տարբերակներ: Գոյություն ունեցող ճանապարհների հնարավորություններն ավելի լավ կառավարելու շնորհիվ՝ LA County-ի բոլոր օգտագործողների համար կարելի է ավելի մեծ շարժողականություն ապահովել:



Metro

Metro-ի տեսլականի արդյունքները միտված են կրկնապատկելու մեկական հոգի փոխադրումից բացի տրանսպորտային այլ եղանակների օգտագործման տոկոսը, ներառյալ՝ հանրային փոխադրամիջոցներից օգտվելը, ոտքով քայլելը, հեծանիվ վարելը, տրանսպորտային միջոցի համատեղ օգտագործելը և մեկ մեքենայով այլ անձանց հետ գործի գնալը՝ արձանագրելով հետևյալ ձեռքբերումները.

- County-ի բոլոր բնակիչների համար ապահովելով տնից ոտքով կամ անվատախտակով 10 րոպե հեռավորությամբ գտնվող բարձրորակ տրանսպորտային տարբերակների հասանելիություն
- Օրվա որևէ ժամին մինչև 15 րոպե կրճատելով առավելագույն սպասման ժամկետը
- 30%-ով բարելավելով County-ի ավտոբուսային ցանցի ուղևորության միջին արագությունը
- Օգտվողներին տրամադրելով խցանումները շրջանցելու հուսալի և հարմարավետ տարբերակներ

Տեսլական 2028-ի նպատակները

Այս միտումներին արձագանքելու և տեսլականի ցանկալի արդյունքներին հասնելու համար, Տեսլական 2028-ը սահմանում է հետևյալ հինգ նպատակները.

1. Տրամադրել բարձրորակ տրանսպորտային տարբերակներ, որոնք մարդկանց թույլ կտան ավելի քիչ ժամանակ վատնել ճամփորդության վրա,
2. Փոխադրման համակարգի բոլոր օգտագործողների համար ապահովել փոխադրումների բարձրորակ փորձառություն,
3. Բարելավել համայնքները և կյանքերը փոխադրումների և հնարավորություններին հասանելիության միջոցով,
4. Ձևավորել LA County-ն՝ տարածաշրջանային համագործակցության և ազգային առաջնորդության միջոցով, և
5. Metro-ի կազմակերպության ներսում ապահովել արձագանքող, հաշվետվողական և վստահություն ներշնչող կառավարում



Metro[®]

Ճրագրի վերջնամասում տեղ գտած Գործողությունների մատրիցան ամփոփում է Metro-ի կողմից իրականացվելիք նպատակները, նախաձեռնություններն ու գործողությունները: Metro-ն հանրությանը պարբերաբար կգեկուցի այս նպատակներին և նախաձեռնություններին հասնելու ճանապարհին գրանցված հաջողությունների մասին, և յուրաքանչյուր հինգ տարին մեկ մենք կվերանայենք Ճրագիրը՝ վստահ լինելու համար, որ շարժվում ենք դեպի մեր տեսլականը:

LA County-ի տրանսպորտային մարտահրավերների մասին բարձրաձայնելը պահանջում է համարձակ գործողություն, առաջնորդություն և լայնածավալ աջակցություն: Տրանսպորտային խոչընդոտների չեզոքացումը կօգնի LA County-ի տնտեսական և սոցիալական խոստման կատարմանն ու պահպանմանը, և տարածաշրջանի ձևափոխմանը ավելի երջանիկ, ավելի կենսունակ, ավելի բարեկեցիկ և ավելի արդարացի ապրելու և աշխատելու համար վայրի:

LA County-ի տրանսպորտային
մարտահրավերների մասին բարձրաձայնելը
պահանջում է համարձակ գործողություն,
առաջնորդություն և լայնածավալ աջակցություն:

